

## **Քննարկվել է Մարտունու բժշկական կենտրոնի արդիականացման խնդիրը**

08.08.2016

Մարտունու բժշկական կենտրոնի արդիականացման խնդրի կարգավորման նպատակով տեղում համատեղ ուումնասիրություն են կատարել ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը, Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը և ՀՀ առողջապահության փոխնախարար Սերգեյ Խաչատրյանը: Աշխատանքային խումբի անդամները շրջայց են կատարել բժշկական կենտրոնի մասնաշենքերում, հիվանդասենյակներում, լսել են տնօրինության, բուժանձնակազմի, առանձին մասնագետների կարծիքները, ծանոթացել ընդհանուր իրավիճակին և կազմակերպել քննարկում, որի ընթացքում փոխնախարարը խոսել է բժշկական կենտրոնի շենքի արդիականացման ծրագրի երկու տարբերակների մասին, որոնց հանձնարարականը տրվել էր 2015 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ: Քննարկման ընթացքում ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից առաջարկվել է նաև Մարտունու ԲԿ-ի շենքի վերակառուցման տարբերակը: 'Մի քանի օր առաջ Մարտունու ԲԿ այցելեց ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, որից հետո շահագրգիռ գերատեսչությունները վարչապետի կողմից ստացան հանձնարարական՝ մանրամասն հետազոտելու և բժշկական կենտրոնի արդիականացման խնդրի կարգավորմանն ուղղված առաջարկություն ներկայացնելու համար: Մանրամասն քննարկել ենք հիվանդանոցի շենքին և տարածքներին, ինչպես նաև բուժառայություններին վերաբերող հարցեր: Մենք այժմ որոշման կայացման ընթացքում ենք, առաջիկա օրերի ընթացքում ի մի կգանք՝ ներկայացնելով վերջնական որոշումը: Քննարկվող երեք տարբերակներից առաջինը բժշկական կենտրոնի մի հատվածի առանձնացումը, ուժեղացումը և հիմնանորոգումն է, երկրորդ տարբերակը՝ հիմքից նոր շենքի կառուցումը, որն, ի դեպ, միջոցների առկայության դեպքում լավագույն տարբերակն է, և երրորդ՝ նախկին ինֆեկցիոն բաժանմունքի շենքի ուժեղացումը, հիմնանորոգումը և կից կառույցի կատարումը',- ներկայացրել է փոխնախարար Սերգեյ Խաչատրյանը: Մարտունու բժշկական կենտրոնի արդիականացման խնդրի կարգավորման նպատակով հրավիրված քննարկման ավարտին ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջարկով ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ևս մեկ անգամ նախատեսված երեք տարբերակների շուրջ կիրականացվեն ուումնասիրություններ, հաշվարկներ և կներկայացվի համապատասխան առաջարկություն: